

	ԱՔՌԱ վարկային բյուրոյից հարցում կատարելու, վարկային բյուրոյին և վարկային ռեզիստրին տվյալների տրամադրման ընթացակարգ	խմբ. ամսաթիվ	Հաստատման ամսաթիվ	Էջերի քանակ
		28.08.2017թ. 22.05.2018թ.	18.11.2016թ.	էջ 1/9

Հավելված 2

ԱՔՌԱ վարկային բյուրոյից հարցում կատարելու, վարկային բյուրոյին և վարկային ռեզիստրին տվյալների տրամադրման ընթացակարգի

Համաձայնագիր

Սույնով տալիս եմ իմ համաձայնությունը.

- ԱԳԲԱ Լիզինգի կողմից հարցում կատարվի «ԱՔՌԱ Քրեդիտ Ռեփորթինգ» ՓԲ ընկերությանը՝ և «ԱՔՌԱ Քրեդիտ Ռեփորթինգ» ՓԲ ընկերությունից իմ ներկա և անցյալ ֆինանսական պարտավորությունների վերաբերյալ տեղեկություններ և/կամայլ տվյալներ ստանալու, որոնք ԱԳԲԱ Լիզինգի կողմից կարող են հաշվի առնվել ինձ հետ լիզինգի պայմանագրի կնքելու վերաբերյալ որոշում կայացնելիս:

- ԱԳԲԱ Լիզինգը լիզինգի պայմանագրի գործողության ողջ ընթացքում ցանկացած պահի առանց ինձ նախապես տեղյակ պահելու մոնիտորինգ իրականացնելու նպատակով «ԱՔՌԱ Քրեդիտ Ռեփորթինգ» ՓԲ ընկերությունից ստանա իմ ֆինանսական պարտավորությունների վերաբերյալ տեղեկություններ, ինչպես նաև այլ տվյալներ:

- Պայմանագրային հարաբերության ծագման պահից սույն պայմանագրի գծով ԱԳԲԱ Լիզինգը իմ վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրելու է «ԱՔՌԱ Քրեդիտ Ռեփորթինգ» ՓԲ ընկերությանը:

- ԱԳԲԱ Լիզինգը իրավունք ունենա ինձ սեփականության կամ ընդհանուր սեփականության իրավունքով պատկանող գույքերի վերաբերյալ հարցում կատարելու ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե և ստանա տեղեկատվություն իմ գույքային իրավունքների, այդ թվում՝ դրա ծագման հիմքերի վերաբերյալ, ինչպես նաև կադաստրային գործից ստանալ սեփականության իրավունքի վկայականի, հատակագծի և այլ անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները՝ մինչ լիզինգի պայմանագրով նախատեսված պարտավորությունների լրիվ կատարումը:

Սույն համաձայնությունը կարդացել եմ և հավաստում եմ, որ այն ինձ համար ամբողջությամբ հասկանալի և ընդունելի է:

Դիմող՝

_____ (անուն, ազգանուն/անվանում)

_____ (անձնագիր/ՀՎՀՀ)

_____ (ստորագրություն)

կ.տ.

...../.....թ.